ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 561

30 օգոստոս 2021թ.

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ և հիմք ընդունելով <<Կապիտալ Բիլդ>>ՍՊԸ-ի ներկայացուցիչի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. <<Կապիտալ Բիլդ>>Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրել ք. Ծաղկաձոր, Վ.Հարությունյան փողոց թիվ 10/1 հասցեում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման շինարարության թույլտվություն:
2. Համայնքապետարանի քաղաքաշինության գլխավոր մասնագետին ապահովել աշխատանքների սկսման համար, գործող կարգին համապատասխան անհրաժեշտ փաստաթղթերի ձևակերպումը և պատշաճ հսկողություն իրականացումը:
3. Սույն որոշման ստորագրման պահից սկսած 3-օրյա ժամկետում կատարել հանրային իրազեկում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 562

31 օգոստոս 2021թ.

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Էդգար Բունիաթյանի ներկայացուցիչ Ժոզեֆ Սարգսյանի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էդգար Բունիաթյանին տրամադրել ք. Ծաղկաձոր, Սարալանջի փողոց 2-րդ փակուղի թիվ 2 հասցեում բնակելի տների, օժանդակ շինության և պարսպի կառուցման շինարարության թույլտվություն:
2. Համայնքապետարանի քաղաքաշինության գլխավոր մասնագետին ապահովել աշխատանքների սկսման համար, գործող կարգին համապատասխան անհրաժեշտ փաստաթղթերի ձևակերպումը և պատշաճ հսկողության իրականացումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ թիվ 563

31 օգոստոս 2021թ.

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 22-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշման 25-րդ կետի 1-ԻՆ մասով, հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի գլխավոր հատակագծի պահանջները,2006 թվականի հունիսի 6-ի Ծաղկաձոր համայնքի ավագանու թիվ 3/1 որոշումը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ հողամասը չի առնչվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերին,չի գտնվում օրենսդրությամբ սահմանված քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների տարածքում, նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած դասակարգմամբ բարձր և բարձրագույն ռիսկայնության օբյեկտների կառուցման համար, նախատեսված չէ պետական բյուջեի(այդ թվում՝ պետությանը տրամադրված վարկային և դրամաշնորհային) միջոցների հաշվին կամ դրանց ներգրավմամբ օբյեկտների կառուցման համար՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հաշվի առնելով համայնքի գլխավոր հատակագծի պահանջները՝ Ծաղկաձոր համայնքին պատկանող, համայնք Ծաղկաձոր Ավետիք Իսահակյան փողոց թիվ 12/1 հասցեում գտնվող, 0,03 հա մակերեսով հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը բնակավայրերի ընդհանուր օգտագործման հողերից փոփոխել հատուկ պահպանվող, հանգստի համար նախատեսված հողերի:

2.Սույն փոփոխությունը կատարել նաև համայնքի կադաստրային քարտեզում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 564

31 օգոստոս 2021թ.

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ՀՈՒՆՎԱՐԻ 18-Ի ԹԻՎ 5 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ավագանու 2021 թվականի օգոստոսի 20-ի թիվ 69-Ն որոշումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ծաղկաձոր համայնքի ղեկավարի 2021 թվականի հունվարի 18-ի <<Ծաղկաձոր համայնքի 2021 թվականի եկամուտների և ծախսերի եռամսյակային համամասնությունները հաստատելու մասին>> թիվ 5 որոշման թիվ 1 և 2 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 565

01 սեպտեմբեր 2021թ.

ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔԻ ՎԱՃԱՌՔ ԿԱՄ ԻՐԱՑՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>>օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Անհատ ձեռնարկատեր Արտյոմ Գալստյանի/ գործունեության հասցեն՝ ք. Ծաղկաձոր, Գրիգոր Մագիստրոսի փողոց,թիվ 11 / տրամադրել՝

1) 2021 թվականի 2-րդ եռամսյակի եռամսյակի ընթացքում ոգելից խմիչքի վաճառք կամ իրացում կազմակերպելու թույլտվություն՝ 13 քմ տարածքում,

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 566

01 սեպտեմբեր 2021թ.

ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԵՎ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔԻ ՎԱՃԱՌՔ ԿԱՄ ԻՐԱՑՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 4-րդ կետերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. <<Կեչառիս Հոթել>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը / գործունեության հասցեն՝ ք.Ծաղկաձոր, Օրբելի Եղբայրների փողոց, թիվ 20/ տրամադրել՝

1) 2021 թվականի 3-րդ եռամսյակի ընթացքում հանրային սնունդ կազմակերպելու և իրացնելու թույլտվություն՝ 704 քմ տարածքում,

2) 2021 թվականի 3-րդ եռամսյակի ընթացքում ոգելից խմիչքի վաճառք կամ իրացման կազմակերպելու թույլտվություն՝ 704 քմ տարածքում,

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 567

02 սեպտեմբեր 2021թ.

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 48-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 93-Ն որոշումը և համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 14-ի թիվ 04 որոշումը, ինչպես նաև Ծաղկաձոր համայնքի բնակիչ Գոհար Միշայի Ղազարյանի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Քաղաք Ծաղկաձոր, Խաչատուր Կեչառեցու փողոց , շենք 8, բնակարան 10 հասցեի բնակիչ Գոհար Ղազարյանին տրամադրել դրամական օգնություն 40 000 (քառասուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով՝ սոցիալական խնդիրները հոգալու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 568

06 սեպտեմբեր 2021թ.

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշումով և <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 37-րդ հոդվածով:

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Արթուր Մանուկի Մուրադյանին սեփականության իրավունքով պատկանող՝ 0.093 հա մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր, Պահլավունյաց փողոց թիվ 24:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ԾԱՂԿԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ *03001885*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 569

08 սեպտեմբեր 2021թ.

ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ՎԱՃԱՌՔ ԿԱՄ ԻՐԱՑՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Անհատ ձեռնարկատեր Աշոտի Մելքոնյանին / գործունեության հասցեն՝ ք. Ծաղկաձոր, Գրիգոր Մագիստրոսի 11 / տրամադրել՝

1) 2021 թվականի 3-րդ եռամսյակի ընթացքում ոգելից խմիչքի և ծխախոտի վաճառք կամ իրացում կազմակերպելու թույլտվություն՝ 70 քմ տարածքում,

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 570

09 սեպտեմբեր 2021թ.

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Կարապետ Վազգենի Ասատրյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության վկայական N 15112018-07-0028)՝ մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր,Տանձաղբյուրի փողոց 22 հասցեում գտնվող 0,078 հա մակերեսով հողամասի և (սեփականության վկայական N 15112018-07-0014) Կոտայք, համայնք Ծաղկաձոր,Տանձաղբյուրի փողոց թիվ 22/1 հասցեում գտնվող 0.039 հա մակերեսով հողամասի միավորման հետևանքով առաջացած 0.117 հա մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր, Տանձաղբյուրի փողոց թիվ 22:

2. Մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր,Սարալանջի փողոց 22/1 հասցեն համարել ազատ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 571

09 սեպտեմբեր 2021թ.

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 48-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 93-Ն որոշումը և համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 14-ի թիվ 04 որոշումը, ինչպես նաև Ծաղկաձոր համայնքի բնակիչ Էմմա Անդրանիկի Ավագյանի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Քաղաք Ծաղկաձոր,Գրիգոր Մագիստրոսի փողոց , շենք 13, բնակարան 14 հասցեի բնակիչ Էմմա Ավագյանին տրամադրել դրամական օգնություն 40 000 (քառասուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով՝ առողջական և սոցիալական խնդիրները հոգալու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ *03001885*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 572

09 սեպտեմբեր 2021թ.

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 48-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 93-Ն որոշումը և համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 14-ի թիվ 04 որոշումը, ինչպես նաև Ծաղկաձոր համայնքի բնակիչ Շուշանիկ Միխայիլի Աֆյանի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Քաղաք Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների նրբանցք , շենք 6, բնակարան 6 հասցեի բնակիչ Շուշանիկ Աֆյանին տրամադրել դրամական օգնություն 40 000 (քառասուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով՝ առողջական և սոցիալական խնդիրները հոգալու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ *03001885*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 573

09 սեպտեմբեր 2021թ.

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշումով և <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 37-րդ հոդվածով:

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Արամ Սերգեյի Խաչատուրովին սեփականության իրավունքով պատկանող՝ (սեփականության վկայական՝ N 2450340, տրված՝ 13 նոյեմբերի 2008 թվական) 0.061 հա մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր, Նոր թաղամաս 1-ին փողոց թիվ 29 :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 557

30 օգոստոս 2021թ.

ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Անհատ ձեռնարկատեր Արմեն Սեդրակյանին /գործունեության հասցեն՝ ք. Ծաղկաձոր, Գրիգոր Մագիստրոսի փողոց, թիվ 2/ տրամադրել՝

1) 2021 թվականի 3-րդ եռամսյակի ընթացքում ոգելից խմիչքի և ծխախոտի վաճառք կամ իրացում կազմակերպելու թույլտվություն՝ 55.5 քմ տարածքում,

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 558

30 օգոստոս 2021թ.

ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՈՒՆԴ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Անհատ ձեռնարկատեր Արփինե Սարգսյանին /գործունեության հասցեն՝ ք. Ծաղկաձոր,Վլադիմիր Հարությունյան փողոց, թիվ 8/ տրամադրել՝

1) 2021 թվականի 3-րդ և 4-րդ եռամսյակների ընթացքում հանրային սնունդ կազմակերպելու և իրացնելու թույլտվություն՝ 80 քմ տարածքում,

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 559

30 օգոստոս 2021թ.

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 48-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 74-Ն որոշումը և համայնքի ավագանու 2021 թվականի հունվարի 14-ի թիվ 04 որոշումը, ինչպես նաև Ծաղկաձոր համայնքի բնակիչ Աննա Վարդգեսի Նազարեթյանի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Քաղաք Ծաղկաձոր, Խաչատուր Կեչառեցու փողոց, թիվ 69/1 հասցեի բնակիչ, Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի առաջին կուրսի ուսանողուհի Աննա Նազարեթյանին տրամադրել դրամական օգնություն 100 000 (մեկ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով՝ ուսման վարձը վճարելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 560

30 օգոստոս 2021թ.

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ռաֆի Կրիկորի Սամարդջյանի կողմից իր սեփականություն հանդիսացող հողամասի վրա՝ քաղաք Ծաղկաձոր, Պահլավունյաց փողոց, թիվ 82 հասցեում առանց համապատասխան թույլտվության կատարվել են շինարարական աշխատանքներ, հիմքի և հենապատի ինքնակամ կառուցում:

<<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով Ծաղկաձորի համայնքապետարանում հարուցվել է վարչական վարույթ:

Համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի՝

<<1. Սեփականության կամ հողօգտագործման իրավունք ունեցող անձանց կողմից այդ հողամասի վրա շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելը, ինչպես նաև բազմաբնակարան շենքերում կամ շենքերին կից ինքնակամ կառույցներ կատարելը, բացառությամբ գյուղական համայնքներում տնամերձ հողամասի վրա ինքնակամ կառուցված անհատական բնակելի տան՝

- առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:>>

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի՝

<<1. Ինքնակամ կառույց է համարվում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով կառուցված կամ վերակառուցված շենքը, շինությունը կամ այլ կառույցը:>>

Համաձայն <<Քաղաքաշինության մասին>> օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի <<ա>> կետի՝

<<Կառուցապատողները պարտավոր են՝

ա) կառուցապատումն իրականացնել օրենքով սահմանված կարգով՝ հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան, շինարարության թույլտվության հիման վրա.>>:

Ելնելով վերոգրյալից, ուսումնասիրելով վարչական վարույթի նյութերը, ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի / սեփականության իրավունք ունեցող անձի կողմից հողամասի վրա շինության ինքնակամ կառուցում/ հատկանիշներով, 219 [1] հոդվածով և հիմք ընդունելով վարչական հանձնաժողովի 2021 թվականի օգոստոսի 30-ի վարչական վարույթի նիստի արձանագրությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ռաֆի Կրիկորի Սամարդջյանի /հասցե՝ քաղաք Ծաղկաձոր, Պահլավունյաց փողոց , թիվ 82/ նկատմամբ նշանակել տուգանք՝ 200 000 (երկու հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով:

2.Տուգանքը վճարել սույն որոշումը ստանալու օրվանից 15 օրվա ընթացքում Ծաղկաձոր համայնքի բյուջե՝ 900125002114 հաշվեհամարին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պարտապանին իրազեկելուն հաջորդող օրը:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ Ծաղկաձոր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության Վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսյա ժամկետներում:

5. Վճարումը սահմանված ժամկետում չիրականացնելու և որոշումն անբողոքարկելի դառնալու դեպքում գումարը կգանձվի Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**